ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ք.Երևան **«10» նոյեմբեր 2023թ.**

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 8

Պատվիրատու՝ «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամ Գյումրու մասնաճյուղ

Մասնակից՝ «Բարելավում» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ ՀԱՊՀ-ԳՄ-ԷԱՃԱՊՁԲ-23/7

Առարկան՝ Շինարարական ապրանքներ

Գործի նախապատմություն

«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի Գյումրու մասնաճյուղի կարիքների համար շինարարական ապարքների գնման նպատակով 2023 թվականի հոկտեմբերի 13-ին հայտարարվել է «ՀԱՊՀ-ԳՄ-ԷԱՃԱՊՁԲ-23/7» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ:

Ընթացակարգին հայտ է ներկայացրել «Բարելավում» ՍՊԸ-ն (այսուհետև՝ Մասնակից): Մասնակցի հայտում, 2-րդ, 3-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժինների համար, լրացված չէին ներկայացված ֆիրմային անվանումը, արտադրողը:

«Բարելավում» ՍՊԸ-ն 2-րդ, 3-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժինների գծով հանդիսացել է նվազագույն գնային առաջարկ ներակայացրած Մասնակից: Մասնակցին տրամադրվել է մեկ աշխատանքային օր արձանագրված թերությունները շտկելու համար: Շտկման համար նախատեսված ժամանակի ավարտից հետո, արձանագրվել է, որ 2-րդ, 3-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժինների համար մասնակցի կողմից առաջարկվող ապրանքների արտադրողի անվանումը չի լրացվել.

Մասնակցի հայտը 2-րդ,3-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժինների գծով մերժվել է և ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարությունը հրապարակվել է www.gnumner.am կայքում:

Եզրակացություն և եզրահանգում

Համաձայն ՀՀ Կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 41-րդ կետի

«Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ....., ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները»:

Սույն ընթացակարգի շրջանակներում Մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա անհամապատասխանությունը այն էր, որ 2-րդ, 3-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժինների գծով առաջարկվող ապրանքի "արտադրող" դաշտերը լրացված չեն եղել:

Համաձայն ՀՀ Կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 42-րդ կետի

Եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: **Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է...**

Մասնակցի կողմից իրականացված շտկման արդյունքում ներկայացված հայտը չի համապատասխանում հրավերի պայմաններին՝ ապրանքների «արտադրողի անվանում» դաշտը լրացված չեն:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի «ա» պարբերության «... գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝

6) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը **կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը** ...»:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6) ենթակետի «ա» պարբերությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Լիազորված մարմնին ներկայացնել «Բարելավում» ՍՊ ընկերությունը՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում 2 (երկու) տարի ժամկետով ընդգրկելու համար:

ՌԵԿՏՈՐ՝ **Գ.Պ. ՎԱՐԴԱՆՅԱՆ**